# ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՔՎԵԱՐԿԵՆՔ ՄԵՂՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ **ՍԵՐԳԵՅ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ** ՕԳՏԻՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան,
Արշակունյաց 2: Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2050, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 30.08.2012թ.:
ՈՒՐԲԱԹ
31 ՕԳՈՍՏՈՍԻ
2012Թ
№ 22 (263)

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am



## ԽՈՍՔ ԸՆՏՐՈՂԻՆ

Սիրելի՛ հայրենակիցներ

Երկրորդ անգամ առաջադրել եմ թեկնածությունս եւ ցանկանում եմ սեպտեմբերի 9-ին կայանալիք ՏԻՄ ընտրություններում վերընտրվել Մեղրու համայնքի ղեկավար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ եմ համարում մտքերս կիսել ձեզ հետ եւ պատասխանել հարցին, թե ինչու եմ ուզում եւս մեկ ընտրաշրջան ղեկավարել մեր համայնքը:

Պատասխանատու այդ որոշումն ընդունելիս, նախեւառաջ, ինքս ինձ եմ հարց տվել՝ կարո՞ղ եմ արդյոք շարունակել Մեղրու քաղաքային իշխանության ղեկավարումը, ունե՞մ անհրաժեշտ հնարավորությունները: Բազմակողմանի վերլուծությունից, համայնքի առջեւ ծառացած խնդիրները վերստին «գույքագրելուց», առկա մարտահրավերները հաշվարկելուց ու ծանրութեթեւ անելուց եւ կառավարման արդի պահանջները հաշվի առնելուց հետո եկել եմ եզրակացության, որ՝ այո՛, կարող եմ արժանապատվորեն ղեկավարել Մեղրի համայնքը: Որքան էլ դա սուբյեկտիվ որոշում է՝ առաջին հայացքից, բայց ամենախիստ մոտեցումների արդյունքում է ծնվել:

Որոշում ընդունելիս չէի կարող չխորհրդակցել ամենատարբեր բնագավառի մասնագետների, ընտրողների հետ: Առանց չափազանցության՝ բազմաթիվ մեղրեցիներ անկեղծորեն պահանջում են անցած չորս տարվա գործելակերպի շարունակում, ինչը նույնպես երկրորդական հանգամանք չէ:

Առաջիկա ընտրաշրջանում քաղաքը պատշաճորեն առաջնորդելու համար շատ կարեւոր է նաեւ տեղական ինքնակառավարման մարմնում աշխատելու փորձը՝ այնքան էլ ոչ դյուրին ժամանակներում ձեռք բերված:

Ունեմ ներդրումային ծրագրեր (տարբեր կազմակերպությունների հետ), որոնց մի մասն իրականացման փուլում է: Միջազգային երկուերեք ծրագրում Մեղրի համայնքը դիտվում է որպես առաջնահերթություն: Դա հենց այնպես չի ստացվել: Տարիների հետեւողական աշխատանքի շնորհիվ Մեղրու քաղաքապետարանն ու քաղաքապետը ձեռք են բերել վստահելի գործընկերոջ վարկանիշ: Մի խոսքով՝ լավ հիմք է դրված վաղվա օրվա համար:

Երբեք անհամեստություն թույլ չեմ տվել, բայց եւ չեմ կարող չասել՝ անցած չորս տարվա իմ գործունեությամբ վաստակել եմ համայնքը կրկին ղեկավարելու բարոյական իրավունք: Բոլոր հարցերում անկեղծ եւ շիտակ եմ եղել համայնքի բնակիչների հետ, իմ լիազորությունների սահմաններում պաշտպանել եմ Մեղրու շահերը:

Այլակարծության դեպքում, ինչը երեւան է եկել համայնքային որոշ հարցերում, երբեք չեմ թաքցրել իմ դիրքորոշումը, թեեւ երբեմն դա թյուրըմբռնումների ու շահարկումների տեղիք է տվել: Բայց եւ հաշվի ենք նստել բոլոր կարծիքների հետ ու գտել ողջամիտ ելքը. չէ՞ որ Մեղրին բոլորիս տունն է:

Շարունակությունը՝ էջ 3

## ԱՅՑԵՔԱՐՏ

### ՍԵՐԳԵՅ ՕՆԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**Ծնվել է 1960թ. մայիսի 1-ին Մեղրու շրջանի Արեւիկ գյուղում: Ոսկե մեդալով 1977թ. ավարտել է Մեղրու Ստեփան Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է Երեւանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը, որն ավարտել է 1982թ.՝ աէրոհիդրոմեխանիկի մասնագիտությամբ: Այնուհետեւ աշխատել է Հայաստանում մթնոլորտային պրոցեսների դեմ պայքարի ռազմականացված ծառայությունում՝ ավագ ինժեներ: 1985թ. վերադարձել է Մեղրի եւ աշխատել «Հայգյուղտեխնիկա» արտադրական միավորումում՝ ինժեներ: 1986-2008թթ. աշխատել է Մեղրու պահածոների գործարանում՝ արտադրության պետ: 2008թ. հոկտեմբերի 12-ին ընտրվել է Մեղրու քաղաքապետ: 2009 թվականից ՀՀԿ անդամ է: Ամուսնացած է, ունի երեք զավակ:**

Լուսանկարը՝ Գ.Համբարձումյանի

**ՍԵՐԳԵՅ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ԹԵԿՆԱԾՈՒԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՏԱԲԸ:**

Սյունյաց երկիր ®
www.syuniacyerkir.am
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՈՒՐԲԱԹ • 31 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Թ • № 22 (263)



# Ճանաչենք անցյալը, շտկենք ներկան, կերտենք ապագան



## ԽՈՍՔ ԿԱՊԱՆԻ ԸՆՏՐՈՂԻՆ

*Հարգելի՛ ընտրող*

*Առաջին անգամ ներկայանում եմ Ձեզ որպես Կապանի քաղաքապետի թեկնածու: Դա եղել է գիտակցված որոշում իմ կողմից, որին համակարծիք է եղել ընտանիքս: Առաջադրումը կատարվել է ՀՀԿ Կապանի շրջանային խորհրդի կողմից, որը հաստատվել է կուսակցության տարածքային խորհրդի նիստում: Ընտրածս կարգախոսը՝ «Ճանաչենք անցյալը, շտկենք ներկան, կերտենք ապագան», հատուկ նպատակ ունի. մեր պատմությունն ուժ է տալիս մեզ եւ պարտավորեցնում պահպանել արժեքները, իսկ ներկան, իրոք, շտկելու կարիք ունի: Մեր քաղաքը պետք է դարձնենք գրավիչ, առավել բարեկարգ ու մաքուր, ստեղծենք բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ եւ կերտենք Կապան քաղաքի բարեկեցիկ ապագան: Պետք է այնպես անենք, որ մարդիկ գործեն ընդհանուր շահի դիրքերից, իսկ բոլորիս ընդհանուր շահը պետք է լինի մեկը՝ ծառայել մեր սիրելի քաղաքին եւ հնարավորինս նպաստել հայրենի օջախի շենացմանը: Բոլորս հիշում ենք երբեմնի մեր ծաղկուն ու բարեկարգ Կապանը: Համոզված եմ, որ ինձ հետ միասին հավատում եք, որ այդ հիշողություններն անցյալ-երանելի ժամանակների մասին պատմող հեքիաթ չեն լինի մեր երեխաների համար, դրանք կլինեն օրինակ ու ցանկություն, որպեսզի լուծենք ներկայի խնդիրները եւ ապագայում ունենանք այն Կապանը, որն իր հնարավորություններով օրինակ է եղել: Կապանը գերադասելի պետք է դարձնենք բոլորի համար, հատկապես երիտասարդների, որպեսզի նրանք, ուր էլ գնան, ձգտեն վերադառնալ հայրենի քաղաք, այստեղ տեսնեն իրենց վաղվա օրը:*

*Իմ նախընտրական ծրագիրն իրատեսական է, եւ մենք միասին պետք է իրագործենք այն: Մեր նպատակը պետք է լինի համայնքի խնդիրները լուծելը: Գիտակցում եմ, որ բարդ է լինելու, սակայն միաժամանակ համոզված եմ, որ միասին հաղթահարելու ենք առկա բազում խնդիրները: Իմ պայքարն այդ խնդիրների դեմ է, ոչ թե անձանց: Խնդիրներ չպետք է առաջացնել, դրանք պետք է լուծել:*

*Բոլոր ընտրողներին մաղթում եմ իրենց կամքի ազատ ու անկաշկանդ արտահայտում՝ առաջիկա ՏԻՄ ընտրություններում:*

**Աշոտ Հայրապետյան**
**Կապանի քաղաքապետի թեկնածու**

## ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

### Քաղաքաշինություն, կոմունալ սպասարկում, ճանապարհաշինություն եւ տրանսպորտի բնագավառ

- բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգման շարունակականության ապահովում, շենքերի արտաքին տեսքի շտկում եւ բարեկարգում
- սանիտարական մաքրման, աղբահանության անխափան աշխատանքների կազմակերպում
- գիշերային լուսավորության բարելավում
- բազմահարկ բնակելի շենքերի վերելակների անխափան աշխատանքի ապահովում եւ անվտանգ շահագործում
- փողոցների, ներթաղամասային ճանապարհների, մայթերի եւ բակերի բարեկարգման աշխատանքների իրականացում
- հանգստի գոտիների, խաղահրապարակների պահպանություն եւ նորերի ստեղծում
- քաղաքի թաղամասերի միջեւ հասարակական տրանսպորտի աշխատանքի բարելավում
- քաղաքով անցնող միջպետական ճանապարհին՝ ուսումնական հաստատությունների հարակից տարածքներում, հետիոտնի համար վերգետնյա անցումների կառուցման նպատակահարմարության ուսումնասիրում եւ իրականացում
- ինքնակամ շինարարության կանխարգելում եւ կասեցում
- սելավատարների վերակառուցում
- ապաստարաններին առնչվող խնդիրների լուծում
- շաբաթօրյակների ավանդույթի վերականգնում
- զբոսաշրջությունը խթանող ծրագրերի իրականացում
- հասարակական զուգարանների կառուցում

### Առողջապահության եւ սոցիալական ապահովության բնագավառ

- աջակցություն քաղաքի բուժհիմնարկներին
- կադրերի համալրման նպատակով բժիշկ-մասնագետների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում՝ հանրապետական գործադիր եւ տարածքային կառավարման մարմինների օժանդակությամբ
- զոհված եւ հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումներ
- կարիքավոր ընտանիքներին հասցեական օգնության ցուցաբերում


ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՈՒՐԲԱԹ • 31 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Թ • № 22 (263)
® Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ՝ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Աշոտ Հայրապետյանն իմ նախընտրած թեկնածուն է

## ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԱՇՈՏ ԳՐԻՇԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*Ծնվել է 1971 թվականի ապրիլի 10-ին Կապան քաղաքում:*
*1978-1988թթ. սովորել եւ ավարտել է Կապանի N3 միջնակարգ ռուսական դպրոցը:*
*1988թ. ընդունվել է Երեւանի ճարտարագիտական համալսարանի մեքենաշինական ֆակուլտետը եւ ավարտել այն 1993թ.՝ ստանալով մեքենաշինության տեխնոլոգի որակավորում:*
*1990-1993թթ. սովորել է բուհին կից ռազմական ամբիոնում, ստացել հրետանավորի մասնագիտացում եւ լեյտենանտի կոչում:*
*1993-1995թթ. մասնակցել է ինքնապաշտպանական ջոկատների կազմավորմանը, Հայաստանի Հանրապետության հարավարեւելյան սահմանների պաշտպանությանը եւ Արցախի համար մղվող մարտերին:*
*1997-1998թթ. աշխատել է «Սյունիքի մարզային էլեկտրացանցեր» ՊՓԲԸ-ում՝ իրացման բաժնի ավագ մասնագետ:*
*1998-2001թթ. աշխատել է «Հայփոստ» ՊՓԲԸ «Սյունիքի փոստատուն դուստր» ՓԲԸ-ում՝ փոխտնօրեն:*
*2001-2002թթ. ղեկավարել է «Հայփոստ» ՊՓԲԸ «Սյունիքի մարզային ներկայացուցչությունը»:*
*2002 թվականից մինչ այսօր «Հայփոստ» ՓԲԸ «Կապանի փոստային» մասնաճյուղի տնօրենն է:*
*2006թ. փետրվարից Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է:*
*Պարգեւատրվել է ՀՀ պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ», «ՀՀ զինված ուժեր-20 տարի» մեդալներով, «97-րդ մոտոհրաձգային բրիգադի» 15-ամյակի կրծքանշանով, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության «Նշանակալի ավանդի համար» հուշամեդալով:*
*Ամուսնացած է, ունի 3 երեխա՝ 2 դուստր եւ 1 ուստր:*



### ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ
**«Հայփոստ» ՓԲԸ գլխավոր տնօրեն**

Երբ վստահված գործն ինքնանպատակ չես դարձնում, կարողանում ես հասնել հաջողության: Սա է այն սկզբունքը, որ իր աշխատանքում որդեգրել է Աշոտ Հայրապետյանը: Այս պաշտոնում ես Աշոտի առաջին տնօրենը չեմ, սակայն նախորդներից եւս միայն լավ կարծիքներ եմ լսել նրա մասին: Աշոտ Հայրապետյանի լավ աշխատանքի մասին է խոսում այն, որ վերջին տարիներին «Հայփոստը» հանրապետության մասնաճյուղերից ամենաշատ ներդրումներ կատարել է Կապանում: Նա կազմակերպչի, առաջնորդի ունեցած կարողությունները հաջողությամբ է օգտագործում իր ղեկավարած մասնաճյուղի լիարժեք եւ արդյունավետ գործունեության համար: Աշոտը նախաձեռնող է, կարողանում է իր մասնագիտական առաջարկներով առաջ տանել սկսած գործը: Նրա երկարամյա եւ բարեխիղճ աշխատանքի արդյունքում է, որ մասնաճյուղը կայուն հիմքերի վրա է դրվել, դարձել լավագույններից մեկը հանրապետությունում: Աշոտը խնդիրներից եւ հոգսերից չընկճվող, հաջողությունները որպես վերջնական նպատակ չհամարող աշխատող է. միշտ հավատարիմ իր գործին ու սկզբունքներին, միշտ պատրաստ՝ հաղթահարելու դժվարությունները: Լսելու ու դիմացինի կարծիքը հաշվի առնելու նրա տեսակը գնահատելի է: Կարեւորում եմ վստահված գործի նկատմամբ նրա խստությունն ու պատասխանատվությունը, մարդկային հարաբերություններում՝ անմիջականությունն ու հարգանքը, ընկերների հանդեպ՝ անդավաճան նվիրվածությունը, հայրենիքի, հարազատ քաղաքի, ընտանիքի նկատմամբ՝ մեծ սերը, մտահոգությունն ու հոգատարությունը: Սրանք այն հիմնական հատկանիշներն են, որ ընդունելի են դարձնում Աշոտ Հայրապետյան մարդուն: Յուրօրինակ աշխատաոճը, փայլուն ունակությունները, ղեկավարելու կարողությունն ու ճկուն միտքը նրան կտանեն դեպի նոր բարձունքներ:



### ՎԱՉԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
**Սյունիքի փոխմարզպետ**

Համատեղ կուսակցական աշխատանքի ընթացքում եմ ճանաչել Աշոտ Հայրապետյանին, ինչն առիթ է դարձել նրա հետ շփվելու նաեւ որպես ընկերոջ՝ աշխատանքից դուրս: Աշոտ Հայրապետյանը տարիներ ի վեր կուսակցության ակտիվ, նվիրյալ անդամ է եւ մշտապես ապրում է մեր քաղաքին, նաեւ մարզին հուզող հարցերով: Կուսակցական գործունեության ընթացքում նա միշտ ներկայացել է իր ծրագրերով եւ առաջարկներով, միշտ հետաքրքրվել է Կապանի խնդիրներով ու մտահոգ է եղել դրանց լուծմամբ: Նա լավ պատկերացնում է անգամ մարզի խնդիրները, ունի դրանց լուծման իր ուղիները: 2-3 տարի առաջ, երբ մարզպետի հանձնարարությամբ ինձ էր վստահված մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման աշխատանքների համակարգումը, նա մշտապես օգտակար էր լինում իր առաջարկներով եւ աջակցում էր այդ աշխատանքներին: Իսկ ծրագրի մշակման ավարտից հետո նկատեցի, որ դրանում մեծ ներդրում ունի նաեւ Աշոտ Հայրապետյանը: Լինելով ՀՀԿ շրջանային խորհրդի նախագահ, իսկ Աշոտը խորհրդի անդամ՝ միշտ զգացել եմ նրա աջակցությունը՝ կարեւոր որոշումներ կայացնելիս: Ներկուսակցական հարցերում նա միշտ օբյեկտիվ է, կազմակերպված, կարգապահ, ճշտապահ, կարողանում է ճիշտ կողմնորոշվել պատասխանատու պահերին, լինել նախաձեռնող՝ թիմային աշխատանքում: Այդ բոլոր դրական հատկանիշները ես տեսել եմ նրա մեջ ԱԺ ընտրությունների ժամանակ, երբ եղել եմ շրջանային շտաբի պետը, իսկ նա՝ իմ տեղակալը: Չի եղել մի դեպք, որ Աշոտ Հայրապետյանը թերանար իր վրա դրված պարտականությունները կատարելիս: Արել է հնարավորը՝ աջակցելու կուսակցությանը, որին նվիրվել է: Մի խոսքով՝ արժանապատիվ մարդ է, լավ կուսակցական ընկեր: Ծանոթ եմ նրա հայկական ավանդապահ ընտանիքին: Նա նաեւ ընտանիքի լավ հայր է, լավ ամուսին: Միայն կարելի է ողջունել նման մարդու առաջադրումը Կապանի քաղաքապետի պաշտոնում, ով միանշանակ ի վիճակի է աշխատելու եւ փոխելու եղածը միմիայն դեպի լավը:



### ԳԱԳԻԿ ԱՂԱԽԱՆՅԱՆ
**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Սյունիք» տարածքային ստորաբաժանման ղեկավար**

Արդեն յոթ տարի է՝ ճանաչում եմ Աշոտ Հայրապետյանին, եւ տարիների ընթացքում մեր շփումը վեր է ածվել ընկերության: Առաջին իսկ հանդիպումից նկատել եմ, որ Աշոտը

Շարունակությունը՝ էջ 6

## ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻ

Ավագ լեյտենանտ Աշոտ Գրիշայի Հայրապետյանը 1993թ. սեպտեմբերի 11-ին կամավոր ծառայության է անցել Բալահովիտի հրետանային ինքնագնաց գնդում՝ որպես դասակի հրամանատար:

1993թ. հոկտեմբերի 1-ից ծառայել է Կապանի X զորամասի հրետանային դիվիզիոնի 152 մմ հրետանային մարտկոցում՝ դասակի հրամանատար: Ծառայության ընթացքում մասնակցել է Կապան քաղաքի եւ շրջանի պաշտպանական ու մարտական գործողություններին:

1994թ. հունվարի 7-ին զորամասի կազմում տեղափոխվել է ԼՂՀ հարավարեւելյան ճակատ, մասնակցել Հորադիզի համար մղվող մարտերին:

1994թ. փետրվարի 18-ին՝ մարտական առաջադրանք կատարելիս, վիրավորվել է:

1995թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով զորացրվել է որպես պահեստի սպա:

**Մ. ՕՀԱՆՅԱՆ**
**Կապանի Երկրապահ ջոկատի հրամանատար, կապիտան**

**ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԹԵԿՆԱԾՈՒԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՏԱԲԸ:**

### Կրթություն, մշակույթ եւ սպորտ

- նախակրթարանների թվի ավելացում, շենքային պայմանների բարելավում
- նախակրթարաններում աստիճանական անցում երեխաների անվճար հաճախելիության
- նախակրթարանների կադրերի մասնագիտական վերապատրաստում
- համայնքային ենթակայության կրթական, մշակութային եւ սպորտային հաստատությունների նորոգում, նոր գույքով ապահովում
- աջակցություն երաժշտական եւ արվեստի դպրոցներին՝ ազգային նվագարանների բաժիններում սովորող երեխաների թվի ավելացման նպատակով
- բակերում սպորտային հրապարակների ստեղծում
- հուշարձանների, քաղաքում տեղադրված արձանների, քանդակների պահպանություն, եկեղեցու տարածքի բարեկարգում
- գրադարանների, թանգարանների ու պատկերասրահի պայմանների բարելավում, աջակցություն արվեստագետներին

### Բնապահպանություն

- կանաչ գոտիների ստեղծում, մայթեզրերի ծերացած ծառերի փոխարինում երիտասարդ ու նոր ծառատեսակներով
- խմելու ջրի որակի հսկողությանն ուղղված ծրագրերի իրականացում

### Երեխաների, սահմանափակ կարողություններ ունեցող անձանց պաշտպանություն, տաղանդաշատ երեխաների ներուժը բացահայտելու նպատակով հովանավորչական ծրագրերի իրականացում

- մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակությանն ուղղված համալիր ծրագրի մշակում եւ միջոցառումների կազմակերպում
- երեխաներին վերադարձնել հանգստի իրենց իրավունքը, աշխատանքներ տանել՝ վերագործարկելու տարածաշրջանի ամառային ճամբարները
- հասարակական կարգի պահպանման նպատակով հերթապահ կամավոր ջոկատների ստեղծում
- հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքում ներգրավվածության համալիր ծրագրերի իրականացում, թեքահարթակների կառուցում

### Կառավարման համակարգի բարելավում

- Հանրային խորհրդի գործունեության ակտիվացում
- քաղաքացիներին մատուցվող ծառայությունների իրականացում մեկ պատուհանի սկզբունքով
- էլեկտրոնային հաղորդակցման համակարգերի ներդրում եւ կիրառում՝ քաղաքապետարան-քաղաքացի հարաբերություններում:

**Կապան համայնքի ղեկավարի թեկնածու Աշոտ Հայրապետյանի ընտրական շտաբ**

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՈՒՐԲԱԹ ● 31 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Թ ● № 22 (263)

## ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ՝ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



# Աշոտ Հայրապետյանն իմ նախընտրած թեկնածուն է

Սկիզբը՝ էջ 5

բավականին լուրջ մարդ է, ազնիվ, հուսալի ընկեր, ցանկացած դժվար պահի կարելի է վստահել եւ հենվել նրա վրա, ակնկալել անշահախնդիր աջակցություն: Աշոտի մեջ կա մի հատկանիշ, որ շատ եմ կարեւորում՝ հայտնվելով ցանկացած դժվար իրավիճակում՝ կարողանում է ճիշտ կողմնորոշվել եւ կայացնել սթափ որոշում: Ուրախ եմ, որ Հայաստանի հանրապետական կուսակցությունը շատ ճիշտ որոշում է կայացրել եւ Կապանի քաղաքապետի համար առաջադրել ու պաշտպանում է Աշոտ Հայրապետյանի թեկնածությունը: Պատրաստ ենք այդ պայքարում աջակցել նրան՝ հաղթանակի հասնելու համար: Որպես երիտասարդ, որպես կարող ուժ՝ նա արժանի է դրան: Աշոտ Հայրապետյանի մեջ ես տեսնում եմ այնպիսի գծեր՝ կարգապահություն, պատասխանատվություն վստահված գործի նկատմամբ, նվիրվածություն, բարեխիղճ ու սրտացավ մոտեցում Կապանի խնդիրներին, որ իրոք պատրաստ է հանձն առնել քաղաքապետի պաշտոնն ու հասնել հաջողության: Այս խոսքերը ձեւական չեն, եւ կապանցիները սխալված չեն լինի, եթե վստահեն նրան:

**ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Թավադի)**
**Կենսաթոշակառու**



Ճակատագրի բերումով որդիս բնակվում է արտերկրում, եւ ես հաճախ եմ օգտվում «Հայփոստի» ծառայությունից, կենսաթոշակս էլ եմ «Հայփոստից» ստանում: Ասեմ, որ շատ գոհ եմ սպասարկման մակարդակից: Այստեղ ինձ բոլոր աշխատողները ճանաչում ու հարգում են: Չի եղել մի դեպք, որ դժգոհի հեռանամ նրանցից: Դա առաջին հերթին տնօրենի՝ Աշոտ Հայրապետյանի լավ աշխատանքի մասին է խոսում: Նա կարողանում է ճիշտ ղեկավարել, իրեն վստահված գործը կազմակերպել այնպես, որ խնդիրներ չառաջանան, իսկ եղածներն էլ լուծվեն ժամանակին: Այն հատկանիշները, որ անհրաժեշտ են ղեկավարին, ես տեսնում եմ Աշոտ Հայրապետյանի մեջ: Իմ «փոքր ախպերը», ինչպես սիրում եմ հանդիպելիս դիմել նրան, մեծամտանալու հատկություն չունի, նա բոլորի հետ շփվում է, ինչպես հավասարը՝ հավասարի հետ, ինձ էլ միշտ «մեծ ախպեր» է անվանում: Նրան ճանաչում եմ որպես մաքուր մարդու: Աշոտի մասին խոսելիս չեմ կարող նույնիսկ մի վատ բան ասել, վատ բան նրա մասին չեմ էլ լսել: Իմ կարծիքով, նա այն մարդն է, ով կարող է ղեկավարել մեր Կապանը, լուծել բոլոր այն խնդիրները, որոնք, չնայած շատ կարեւոր են, սակայն անուշադրության են մատնված:

**ԱՆԱՀԻՏ ՄԻՆԱՍՅԱՆ**
**Կապանի N1 հիմնական դպրոցի փոխտնօրեն, աշխարհագրության ուսուցչուհի**



Աշոտ Հայրապետյանին ճանաչում եմ ավելի քան 30 տարի: Նա իմ ավագ գործընկեր, մեր բոլորի կողմից հարգված, վաստակաշատ մանկավարժ Սուսաննա Բաբայանի երեք խելացի որդիներից կրտսերն է: Աշոտին հիշում եմ որպես գերազանցիկ աշակերտի, խելացի ուսանողի եւ ամենակարեւորը՝ հոգատար եւ նվիրյալ որդու: Տարիներ հետո Աշոտ Հայրապետյանին ճանաչեցի նաեւ որպես ծնող: Նա մեր դպրոցի լավագույն աշակերտուհիների՝ Սուսաննայի ու Լիլիթի հայրն է: Հոգատար, խստապահանջ, անաչառ հայրիկը միշտ դստրերի կողքին է, նրանց առաջին օգնականն ու ընկերը: Ուսուցիչներն անհամբեր սպասում են նաեւ նրա որդու՝ Տարոնի դպրոց հաճախելուն: Շուրջ ութ տարի Աշոտ Հայրապետյանը Կապանի N1 հիմնական դպրոցի դպրոցական խորհրդի նախագահն է: Այս բնագավառում եւս նա իրեն դրսեւորում է որպես իրազեկված, գիտակ, սկզբունքային եւ նախաձեռնող անձնավորություն: Ունի իր սեփական կարծիքը, կարողանում է լսել դիմացինին եւ տալ ճիշտ խորհուրդ: Կապված է դպրոցի հետ, տեղյակ է կրթության բնագավառի խնդիրներին: Սեպտեմբերի 9-ին ՏԻՄ ընտրություններին ես կքվեարկեմ քաղաքապետի թեկնածու Աշոտ Հայրապետյանի օգտին: Կոչ եմ անում մեր նախկին աշակերտներին, ծնողներին, որ սխալված չեն լինի, եթե իրենք եւս քվեարկեն Աշոտ Հայրապետյանի օգտին: Հիշեք, որ ձեր ուսուցչուհին մարդկանց ճանաչելու փորձ ունի:

**ԼՅՈՒԴՎԻԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**Հունան Ավետիսյան թաղամասի բնակիչ**

Աշոտը մեծացել է իմ աչքի առջեւ: Շուրջ 32 տարի ընտանիքներով մի թաղամասում ենք ապրել, հիմա էլ այդ կապը կա: Նրա ընտանիքը տիպիկ հայկական ընտանիք է, որը վայելում է բոլորի հարգանքը: Աշոտի հայրը՝ Յուրի Լեւոնիչին, ճանաչում են ոչ միայն Կապանում: Նա արժանացել է ԱՊՀ երկրների վաստակավոր էներգետիկի կոչման: Յուրի Լեւոնիչը նաեւ լավ ղեկավար է, այնքան լավ մասնագետ է, որ կենսաթոշակի տարիքը վաղուց լրացել է, սակայն շարունակում են նրան վստահել պատասխանատու աշխատանքը: Արժանի հոր արժանի զավակն է Աշոտը: Նա լավ կրթություն է ստացել, ունի ղեկավարելու փորձ եւ իր մեջ կրում է մարդկային դրական շատ արժանիքներ: Այդ ամենով հանդերձ՝ նա կարող է քաղաքապետ աշխատել: Աշոտը նպատակասլաց է, ձեռք մեկնող, աջակցող, անմիջական՝ մարդկանց հետ շփվելիս: Համոզված եմ, անգամ ամենաբարձր պաշտոններ զբաղեցնելու դեպքում էլ չի մեծամտանա, ինչն այսօր բնորոշ է շատերին, չի մոռանա իր ընկերներին, շարքային կապանցուն: Վստահելով Աշոտ Հայրապետյանին՝ համոզված եղեք, որ կարճ ժամանակում նա կարդարացնի բոլորի հույսերն ու սպասելիքները: ■

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՈՒՐԲԱԹ ● 31 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Թ ● № 22 (263)


# Կրթության համակարգը կղեկավարի Լեւոն Մարգարյանը

**ՆՇԱՆԱԿՈՒՄ**

Սյունիքի մարզպետի 2012թ. օգոստոսի 17-ի N75Ա կարգադրությամբ Լեւոն Մարգարյանը նշանակվել է Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի պաշտոնակատար:



Ծնվել է 1958թ. Կապանում: 1964-65 ուստարուց հաճախել եւ 1974-75 ուստարում ավարտել է Կապանի N5 միջնակարգ դպրոցը: 1975թ. աշխատանքի է անցել Զանգեզուրի էլեկտրացանցի Կապանի ցանցային շրջանում՝ բանվոր: 1976-78թթ. ծառայել է բանակում: Զորացրվելուց հետո կրկին աշխատել է վերոհիշյալ ձեռնարկությունում: Առանց արտադրությունից կտրվելու 1981-82 ուստարում ընդունվել եւ 1985-86-ին ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժինը:

1983թ. նշանակվել է ՀԼԿԵՄ Ղափանի շրջկոմի հրահանգիչ: 1986թ. ընտրվել է նույն շրջկոմի երկրորդ քարտուղար:

1989թ. ընտրվել է Սյունիքի խորհրդտնտեսության կուսկոմիտեի քարտուղար:

1991թ. նշանակվել է Կապանի N11 ութամյա (1992թ-ից՝ միջնակարգ) դպրոցի տնօրեն:

2004թ. ընտրվել է Քաջարանի N1 միջն. դպրոցի գործադիր տնօրեն: 2007թ. նոյեմբերի 27-ին վերընտրվել է նույն պաշտոնում եւ աշխատել մինչեւ 2012թ. օգոստոսի 17-ը:

Ամուսնացած է, ունի երկու որդի:

# Գործատուների կոնֆերանս Սյունիքում

Օգոստոսի 29-ին Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցավ կոնֆերանս՝ «Սոցիալական երկխոսությունը եւ տարածքային զարգացման հիմնախնդիրները Սյունիքի մարզում» օրակարգով, որի գլխավոր կազմակերպիչը Հայաստանի գործատուների միությունն էր ու գործընկերը՝ Սյունիքի մարզպետարանը: Կոնֆերանսին ներկա էր նաեւ Հայաստանի գործատուների միության նախագահ Դավիթ Մակարյանը, ով ասաց. «Այս միջոցառումը երկրորդն է հանրապետությունում, առաջինը Լոռու մարզում է եղել, եւ արդյունքները գոհացուցիչ էին: Հիմնականում փորձելու ենք խթանել մանր եւ միջին բիզնեսի առաջընթացը: Սյունիքում մեծ ներուժ կա նաեւ նպաստելու տուրիզմի զարգացմանը, որն իրականացնելու համար պետք է որոշ քայլեր ձեռնարկենք»: Իսկ թե Լոռու մարզից հետո ինչո՞ւ ընտրվեց հենց Սյունիքը՝ կոնֆերանսն անցկացնելու համար, Դավիթ Մակարյանը նշեց, որ վիճակագրական տվյալներով Սյունիքը բազմաթիվ հիմնախնդիրներ ունի, որոնք լուծելու համար առաջնահերթություն պետք է տալ աշխատուժի առողջության ապահովմանը: Պարտադիր կերպով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սննդի անվտանգության հարցերին, որոնք այսօրվա դրությամբ բարձիթողի վիճակում են: Արհմիություններն էլ իրենց աշխատանքը հստակ չեն իրականացնում, եւ հասարակությունն այդ կառույցին արդեն իսկ լուրջ չի վերաբերվում: Ներկաների մեջ էր նաեւ փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը, ով ասաց, որ սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներում իրենք շահագրգիռ կողմ են հանդիսանալու, որպեսզի այս գործընթացն ընթանա արդյունավետ՝ ի նպաստ



մարզի տնտեսական զարգացման: Դավիթ Մակարյանը հոկտեմբերին նմանօրինակ կոնֆերանս է նախատեսում նաեւ Երեւանում, որի ժամանակ ամփոփվելու են Լոռու եւ Սյունիքի մարզերի կոնֆերանսների արդյունքները: Միջոցառմանը մասնակցում էին նաեւ մարզի քաղաքապետեր, գյուղապետեր, արհմիությունների ներկայացուցիչներ, ուսումնական հաստատությունների տնօրեններ:

**ՔԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

# Կապանցին իրավունք ունի լավ ապրելու... ®

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՎԱԶԴ**

**ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**
**Կապան քաղաքի ավագանու անդամի թեկնածու**



Սիրելի՛ կապանցիներ

Նորից մենք բոլորս կանգնած ենք ընտրության առջեւ: Ես այս ընտրությունները կորակեի ոչ սովորական, քանի որ այս վերջին տարիների ընտրարշավները, ընտրությունները եւ դրանից բխած արդյունքները նոր որակի են հասցրել մարդկանց մտածելակերպը եւ վերաբերմունքն ընտրությունների նկատմամբ: Ընտրելու իրավունք ունեցողներից ոմանք չեն մասնակցում ընտրություններին, քանի որ չեն հավատում արդարությանը, ոմանք մասնակցում են շահադիտական նպատակով կամ ստիպողաբար, սակայն, իհարկե, հիմնական մասսան մասնակցում է գիտակցաբար՝ ապագայի նկատմամբ պատասխանատվություն կրողի զգացումով:

Արդեն ժամանակն է, որ ընտրություններին մոտենանք ավելի օբյեկտիվ եւ անաչառ՝ նամանավանդ ավագանու ընտրություններին: Համայնքի ղեկավարման պրոցեսում ավագանին շատ կապանցիների պատկերացմամբ մինչեւ հիմա ընկալվում է որպես անորոշ դերակատարությամբ, կամակատար օրգան: Ես, սակայն, այդպես չեմ համարում՝ ճիշտ ընտրություն կատարելով եւ ունենալով ուժեղ ու միասնական ավագանի, կապանցին կարող է իր շահերը պաշտպանել իշխանության բոլոր մակարդակներում: Գրագետ եւ համերաշխ ավագանին՝ անկախ անդամների կուսակցական պատկանելությունից եւ սոցիալական դիրքից, պետք է կանգնած լինի թե քաղաքապետի, թե յուրաքանչյուր կապանցու կողքին:

Կապանցու համար այլընտրանք չկա, նահանջելու ժամանակ չկա. այդ են ստիպում ապագայի հանդեպ հավատի կորուստը, մասնատվող ընտանիքների թվի աճը, դատարկվող գյուղերը, հայ ազգին եւ եկեղեցուն խորթ բարքերի եւ երեւույթների աճը: Ես ուզում եմ, որ պահպանվի հայ օջախի համն ու հոտը, որ երեխաները չմոռանան մեր բազմադարյան պատմությունը եւ Արցախյան հերոսամարտը, մեր կանայք եւ նրապսակ հարսները ժենգալով հացը չփոխարինեն համբուրգերով կամ պիցցայով, մեր բազմահմուտ հայրերն ու եղբայրները վերադառնան պանդխտությունից եւ շենացնեն հայրենի Կապանը, ազատագրված տարածքները եւ ոչ թե օտարների երկիրը, որտեղ հարյուր տարի էլ մնան՝ մնալու են հյուրի կարգավիճակում:

Նորանկախ Հայաստանի ամենամեծ մարզի մարզկենտրոնի բնակիչը՝ ունենալով հսկայածավալ բնական հարստություններ, բազմաթիվ սառնորակ եւ քաղցրահամ աղբյուրներ, շրջապատված լինելով փարթամ անտառներով, իրավունք ունի ունենալու անվճար մանկապարտեզներ, երաժշտական եւ սպորտային դպրոցներ, գնահատված վետերաններ եւ նյութապես ապահովված ու շնորհալի ուսանողներ, շնչելու մաքուր օդ եւ խմելու քսանչորսժամյա մաքուր ջուր:

Աշխատավոր կապանցին եւ իր երեխաներն իրավունք ունեն հանգստանալու հայրենի գեղատեսիլ բնության մեջ՝ հանգստյան տներում եւ ճամբարներում:

Խուսափելով ծայրահեղությունից եւ հաշվի առնելով ռեալ իրականությունը, Կապանի էկոլոգիական, ճարտարապետական տեսքին եւ քաղաքային ապրելակերպի հիմնարար արժեքներին առնչվող ցանկացած հարց պետք է լուծվի քաղաքացու շահերից ելնելով եւ ոչ թե սպասարկի խմբակային շահեր:

*Հարգելի՛ ընտրողներ, մի եղեք անտարբեր, ձեր ձայնը որոշիչ է, եղեք պահանջատեր ձեր արժանավայել ապագայի համար...* ■

# Գրիշա Ալեքսանյան

**ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ**

Կյանքի 85-րդ տարում մահկանացուն կնքեց Գրիշա Արմենակի Ալեքսանյանը՝ Սիսիանի շրջանի Սպանդարյան գյուղից: Ընտանիքը, որտեղ ծնվել ու հասակ է առել նա, կրել է ժամանակի պարտադրած բոլոր դժվարությունները եւ մինչեւ վերջ ճաշակել ստալինյան բռնապետության դառը պտուղները՝ սկսած անհիմն մեղադրանքից ու հալածանքից, մինչեւ դաժան ու անմարդկային հաշվեհարդար: Փոքր հասակում զրկված լինելով մորից, կորցրել է նաեւ հորը, որին գնդակահարել են աքսորավայրում՝ հեռավոր Կուրիլյան կղզիներում: Շատ չանցած, Մեծ հայրենականում զոհվում է նաեւ ավագ եղբայրը՝ տան հոգսը թողնելով ծեր պապի ու պատանի Գրիշայի վրա: Բազմանդամ այս ընտանիքի դառը ճակատագիրը, կարծես, միահյուսվում է պատերազմի ավերածություններից քայքայված երկրի ճակատագրին. բոլորի հետ Գրիշան եւ արդեն ոտքի կանգնած նրա եղբայրները եւս լծվում են երկրի վերականգնման ու շենացման գործին: Աշխատել է կոլտնտեսությունում որպես անասնապահ, տրակտորիստ, անասնապահության, ապա՝ դաշտավարության բրիգադավար, իսկ մինչեւ հանրային տնտեսությունների քայքայումը՝ պահեստապետ: Որտեղ էլ աշխատել է, ցուցաբերել է իրեն հատուկ պատասխանատվություն ու նվիրվածություն, որը գնահատվել է հավուր պատշաճի: 1976 թվականին, երբ աշխատում էր որպես դաշտավարության բրիգադավար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից պարգեւատրվել է «Պատվո նշան» շքանշանով՝ տարածաշրջանի բարձրադիր գոտու համար աննախադեպ՝ հեկտարից 28 ցենտներ բերք ստանալու համար: Պատերազմի տարիներին թիկունքում իրականացրած անբասիր ու նվիրված աշխատանքի համար, 1985 թվականին, Մեծ հաղթանակի 40-ամյա տարեդարձի կապակցությամբ, պարգեւատրվել է հուշամեդալով:

Գրիշա Ալեքսանյանի՝ պարզ, բարի, արդարամիտ մարդու կերպարը միշտ վառ կմնա համագյուղացիների ու նրան ճանաչողների սրտերում:

**Սպանդարյանի համայնքապետարան**

**ԿՈՐԵԼ Է** Մեղրու քաղաքի N2 միջնակարգ դպրոցի 1994-95 ուստարվա շրջանավարտ Աննա Դորիկի Դավթյանի միջնակարգ կրթության AN 099040 ատեստատը: Համարել անվավեր:

**ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ** «Սյունյաց երկրի» խմբագրակազմը վշտացած է վաստակաշատ լրագրող Էդվարդ Սարդարյանի մահվան կապակցությամբ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

# Էդվարդ Սարդարյան

**ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ**

**Տեւական հիվանդությունից հետո երկրային կյանքին հրաժեշտ տվեց Կապանի լրագրային բնագավառի երախտավոր Էդվարդ Արտաշեսի Սարդարյանը: Անձնավորություն, ով իր գիտակցական կյանքը նվիրաբերել էր հոգեհարազատ մասնագիտությանը՝ ժուռնալիստիկային:**

Ծնվել է 1932թ. Կապանի տարածաշրջանի Ագարակ գյուղում, ծառայողի ընտանիքում: Ագարակ գյուղի յոթնամյակը գերազանց առաջադիմությամբ ավարտելուց հետո տեղափոխվել է Կապանի N2 միջնակարգ դպրոց, այնուհետեւ ուսումը շարունակել է Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումում, ապա հեռակա կարգով ավարտել Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտը:

Խորհրդային բանակում ծառայելուց հետո երկու տարի տարբեր աշխատանքներ է կատարել եւ 1956թ. մայիսին աշխատանքի ընդունվել շրջանային «Պղնձի համար» թերթում, որպես գրական աշխատող: 1960 թվականից հեռուստառադիոպետկոմի Մեղրու եւ Կապանի շրջանների սեփական թղթակիցն էր:



1965թ. սեպտեմբերին նշանակվել է «Պղնձի համար» (հետագայում՝ «Կապան») թերթի խմբագրի տեղակալ, իսկ 1982թ. ստանձնել է նույն թերթի խմբագրի պաշտոնը, որը վարել է մինչեւ 1991թ. հունիսի 10-ը՝ կենսաթոշակի անցնելը: Լրագրողական աշխատանքին զուգընթաց ավարտել է բարձրագույն կուսակցական դպրոցի ժուռնալիստիկայի ֆակուլտետը՝ գերազանցությամբ:

Էդվարդ Սարդարյանին որպես լրագրողի՝ բնորոշ էին սկզբունքայնությունը, մատուցվող նյութի խոր իմացությունը, պրոֆեսիոնալիզմը: 1982թ. արժանացել է ԽՍՀՄ ժուռնալիստների միության մրցանակի, «Известия» թերթի հատուկ մրցանակի:

Էդվարդ Սարդարյանի հոդվածները տպագրվել են հանրապետական եւ համամիութենական մամուլում, ընթերցողի սեղանին է դրել ռուսերենից հայերեն թարգմանված հինգ գիրք, դաստիարակել եւ աճեցրել է լրագրողների մի սերունդ: Օժտված էր հումորի զգացումով, շրջապատում հաճախ կատակում էր ու սրամտում, ընթերցողներն անհամբերությամբ էին սպասում մանավանդ նրա երգիծական ժանրի լրագրային հրապարակումներին:

Արհեստավարժ լրագրողի, սկզբունքային մարդու, ընտանիքի օրինակելի հոր եւ ամուսնու հիշատակն անմար կմնա ճանաչողների սրտերում:

**Մի խումբ ընկերներ**

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՈՒՐԲԱԹ • 31 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Թ • № 22 (263)

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ՝ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԱՐՇԱՎԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. «Գործող քաղաքապետը պետք է հեռանա, Մեղրին իրեն արժանի քաղաքապետ պիտի ունենա»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Մեղրու քաղաքապետի թեկնածու Արշավիր Հովհաննիսյանը

**Անկուսակցական Արշավիր Հովհաննիսյանի՝ Մեղրու քաղաքապետի թեկնածու առաջադրվելն այդ համայնքում հասարակական-քաղաքական նոր իրավիճակ, ուժերի նոր հարաբերակցություն է առաջացրել: Նրա գործոնն ավելի մեծ նշանակություն է ձեռք բերել այն բանից հետո, երբ ընտրապայքարի է դուրս եկել նաեւ նախկին քաղաքապետ, ՀՀԿ-ական Միշա Հովհաննիսյանը, ինչն առնվազն նշանակում է, որ իշխանական թիմն առայժմ միասնական ճակատով հանդես չի գալիս: Մեղրիում ստեղծված իրավիճակի շուրջ, որի առաջատար երկու բեւեռից մեկն ակնհայտորեն Արշավիր Հովհաննիսյանն է, տարբեր հարցեր են առաջադրվում եւ քննարկվում հանրության մեջ: Այդ հարցերը հնարավորինս պարզաբանելու եւ Արշավիր Հովհաննիսյանի խոհերին ու նախընտրական ծրագրերին ծանոթանալու համար էլ քաղաքապետի թեկնածուին հրավիրեցինք հարցազրույցի:**



ՏՎՅԱԼՆԵՐ

*Արշավիր Վարոսի Հովհաննիսյան. ծնվել է 1965թ. դեկտեմբերի 30-ին Մեղրի քաղաքում: 1982թ. ավարտել է տեղի Ստեփան Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը: 1982-84թթ. աշխատել է Մեղրու ՇՄՇ 80-ում, ապա՝ ԲՈՒԱՏԶ-ում՝ բանվոր: 1984-86թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ընդունվել է (առանց արտադրությունից կտրվելու) Հայաստանի պետական գյուղատնտեսական ինստիտուտը եւ ավարտել տնտեսագետի որակավորմամբ: 1986-88թթ. աշխատել է «Հայգյուղտեխնիկա» արտադրական միավորումում՝ տնտեսագետ: Այնուհետեւ (մինչեւ 1993թ.) կրկին աշխատել է Մեղրու ԲՈՒԱՏԶ-ում: 1995-96թթ. Մեղրու մաքսակետի տեսուչն էր, 1996-97թթ.՝ Մեղրու հարկային տեսչության՝ քաղաքացիական հարցերով տեսուչը: 1997 թվականից մինչեւ այժմ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ: Որեւէ կուսակցության մինչեւ հիմա չի անդամակցել: Ամուսնացած է, երեք զավակի հայր է: Կրտսերը սովորում է հանրակրթական դպրոցում, իսկ ավագ որդին ու դուստրը Երեւանում բարձրագույն կրթություն ստանալուց հետո վերադարձել եւ աշխատանքի են անցել Մեղրիում:*

Լուսանկարը՝ Զ. Համբարձումյանի

**– Պարո՛ն Հովհաննիսյան, Դուք Մեղրիում ճանաչված անձնավորություն եք: Որոշակի ճանաչում ունեք նաեւ քաղաքական դաշտում՝ ակտիվ գործունեություն էիք ծավալել ԱԺ վերջին ընտրությունների ժամանակ, մի քանի անգամ էլ Մեղրու համայնքի ղեկավարի թեկնածու եք առաջադրվել, բայց ինչ-ինչ պատճառներով հաղթանակի չհասաք: Եվ ահա Մեղրու քաղաքապետ ընտրվելու հայտ եք ներկայացրել նորից, ինչո՞ւ, որո՞նք են շարժառիթները՝ Ձեզ նման պատասխանատու քայլի դրդող:**

– Նախ՝ ես իմ ու երեխաներիս ապագան տեսնում եմ Մեղրիում եւ Մեղրու վիճակի հանդեպ չեմ կարող անտարբեր լինել: Տարիներ շարունակ նույնիսկ փորձել եմ իմ համեստ նպաստը բերել համայնքին, հնարավորինս թեթեւացնել մարդկանց հոգսերը. տաքսի ծառայություն չկար՝ ստեղծեցի, ավտոպահեստամասերի խանութ չկար՝ ստեղծեցի, ծառայություններ ստեղծեցի գազի սպասարկման ոլորտում… Եվ այդ ամենի արդյունքում՝ 30 աշխատատեղ՝ 150 հազար դրամ միջին ամսական աշխատավարձով: Հոգեւոր ոլորտում էլ փորձել եմ ավանդականը վերականգնել: Առաջին անգամ եկեղեցական արարողակարգով հարսանիք կազմակերպեցի: Իմ հարսանիքն էր՝ Մեղրու Սբ Աստվածածին եկեղեցում, քահանան Երեւանից էի հրավիրել: Մի խոսքով ՝ ինձ համար ոչ միայն թանկ է Մեղրու ճակատագիրը, այլեւ՝ անչափելի: Բայց ահա Մեղրիում գործերը շատ վատ են եւ մտահոգիչ: Իսկ ես իմ ձեռնարկատիրական գործունեության մասին պատահական չէ, որ հիշեցրի: Մեղրու քաղաքապետի աթոռին հավակնող ցանկացած մարդ, կարծում եմ, պետք է ունենա որոշակի սեփականություն, շահույթ եւ չպետք է երբեք աչքը գցի համայնքային բյուջեին, որի ամեն մի լուման սրբորեն պիտի ծառայեցվի համայնքին:

**– Փորձենք լույս սփռել Մեղրու նախընտրական դրության վրա, ինչը, որքանով տեսնում ենք, այնքան էլ սովորական չէ: Փաստորեն առաջադրվել է երեք թեկնածու: Երեքից յուրաքանչյուրն էլ, իր դրական ու բացասական կողմերով հանդերձ, Մեղրիում որոշակի ուժ է ներկայացնում եւ որոշակի ընտրազանգված ունի: Դա, իհարկե, մեր դիտարկումն է: Իսկ Դուք ինչպե՞ս եք գնահատում նախընտրական Մեղրու իրավիճակը:**

– Ընդհանրապես Մեղրիում ցանկացած ընտրություն անցնում է խաղաղ մթնոլորտում՝ առանց ավելորդ լարվածության: Վստահ եմ, որ սեպտեմբերի 9-ի ընտրությունն էլ այդպիսին է լինելու: Համաձայն եմ Ձեզ հետ, որ առաջադրված երեք թեկնածուից յուրաքանչյուրն էլ իրենից կոնկրետ ու որոշակի ուժ է ներկայացնում: Գործող քաղաքապետի շուրջ, բնականաբար, հավաքվել են մարդիկ, ովքեր չորս տարվա ընթացքում եղել են նրա հետ, նրա աշխատակազմում, ովքեր միասին ձախողել են քաղաքի կառավարումն ու ապահովել քաղաքի հետընթացը: Միշա Հովհաննիսյանն ավելի շատ ցեղային առաջնորդ է՝ մեծ գերդաստանի զավակ, Մեղրու ամենամեծ գերդաստանի ներկայացուցիչը: Իմ թեկնածության շուրջ, թող անհամեստ չհնչի, ժողովուրդ ասվածն է հավաքվել, երիտասարդությունն է հավաքվել, Մեղրու ապագայով անհանգստացած մարդիկ են հավաքվել: Ահա այս երեք ուժի միջեւ է մրցապայքարը: Առայժմ ամեն ինչ նորմալ է ընթանում: Բայց եւ ենթադրում եմ, որ իշխանական թեւը՝ իր լծակներով, փորձելու է միջամտել ընտրություններին, քանի որ առանց միջամտության չի կարող իր թեկնածուին հաղթանակ ապահովել: Սակայն մենք թույլ չենք տա, որ իշխանական լծակները հակառակ օրենքի գործածվեն, եւ թույլ չենք տա, որ քաղաքում լարվածություն առաջանա:

**– Իսկ Դուք մյուս թեկնածուների հետ բանակցելու, միավորվելու մտադրություն ունե՞ք:**

– Միշա Հովհաննիսյանի հետ արդեն ունեցել ենք անարդյունք մի քննարկում: Երկրորդ հանդիպում չեմ նախաձեռնի, եթե ինքը նախաձեռնի, ապա ես դեմ չեմ լինի: Ընդ որում՝ նա որեւէ ակնկալիք չպիտի ունենա եւ կարող է բանակցելու գալ միայն ու միայն իմ թեկնածությանը սատարելու հստակ մտադրությամբ:

**– Բացառո՞ւմ եք Սերգեյ Հայրապետյանի հետ բանակցելն ու միավորվելը:**

– Չեմ կարծում, որ գործող քաղաքապետը կմիանա մեզ, նրան չեն էլ թողնի: Իսկ իմ կողմից նրան սատարելը տեսականորեն անգամ չեմ պատկերացնում, դա գաղափարական որեւէ տրամաբանության մեջ չի էլ տեղավորվի: Ես համաձայն չեմ նրա գործելակերպին, ի՞նչ միավորման մասին է խոսքը, նա պետք է հեռանա, Մեղրին իրեն արժանի քաղաքապետ պետք է ունենա…

**– Ձեր պատասխանից հետո կարելի է որոշակի ասել, որ թեկնածուների միջեւ փոխզիջում կամ միավորում չի լինի, երեք թեկնածուն էլ քվեարկության կգնան առանձին-առանձին: Բայց չե՞ք պատրաստվում համատեղ քննարկել, ասենք, ընտրությունը հնարավորինս քաղաքակիրթ անցկացնելուն առնչվող հարցեր:**

– Ես ազատ, անկաշկանդ ընտրության կողմնակից եմ եւ պատրաստ եմ ինձանից կախված ամեն ինչ անել:

**– Մեղրիում չեն բացառում տարբերակը, որ երեք թեկնածուն հրավիրվեն բանավեճի՝ ընտրողների մասնակցությամբ: Դուք կմասնակցե՞ք նման բանավեճի, եթե կազմակերպվի:**

– Ոչ միայն կմասնակցեմ, այլեւ շնորհակալ կլինեմ նախաձեռնողներին:

**– Դուք արդեն ասացիք, որ ներկայիս քաղաքապետի գործելակերպին համաձայն չեք, ինչի համար եւ Ձեր թեկնածությունն եք առաջադրել: Ճիշտ է, Դուք արդեն մի քանի նկատառում հայտնեցիք այդ առումով, բայց փորձենք ընդհանրացնել՝ ի՞նչն է գլխավորապես Ձեզ անհանգստացնում Մեղրիում:**

– Մեկ օրինակ՝ համեմատեք Ագարակ եւ Մեղրի քաղաքների զարգացման տեմպերը եւ կտեսնեք, որ Մեղրին հետընթաց է ապրում, Ագարակը՝ առաջընթաց: Եվ ես գիտեմ, թե Դուք ինչպես պիտի արձագանքեք իմ այդ դիտարկմանը:

**– Եվ ի՞նչ պիտի ասեմ:**

– Պիտի ասեք, որ այնտեղ պղնձամոլիբդենային կոմբինատ կա, ինչի գործունեությամբ էլ պայմանավորված է Ագարակի զարգացումը, որ Մեղրին զարգանալու համար այդքան հնարավորություն չունի… Բայց դա այդպես չէ: Կոմբինատը նաեւ Մեղրի համայնքի ու մերձակա գյուղերի համար է, այլ բան է, որ մարդիկ չեն համարձակվում իրերն իրենց անունով կոչել:

**– Դուք դա համայնքի ղեկավարի գործոնո՞վ եք բացատրում:**

– Ուրիշ կերպ չի էլ կարող լինել: Վերջին հաշվով համայնքի ղեկավարն է, որ պետք է բյուջեի նախագիծ կազմի, լրացուցիչ միջոցներ հայթայթի, հանքարդյունաբերության ոլորտում ազդակիր համայնքի պահանջները ներկայացնի… Բազմաթիվ հարցեր էլ կան, որ կարելի է լուծել առանց համայնքային բյուջեի, որը տարիներով չի արվում: Քաղաքի լողավազանը, ինչի կարիքն այդքան շատ է զգացվում



ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՈՒՐԲԱԹ • 31 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Թ • № 22 (263)

Մեղրիում, դարձել է մի ճահիճ: Կարելի էր չէ՞ մաքրել, թեթեւակի նորոգել ու տրամադրել ամառային շոգից հանգիստ չունեցող երեխաներին: Նույնը կարող եմ ասել Արաքսաշեն թաղամասի լողավազանի մասին: Կամ՝ ունենք վեց շենք՝ ինը հարկով, ընդամենը մեկ վերելակ է նորմալ աշխատում: Աղբահանության համար վարձավճարը 150 դրամից դարձրել են 250 դրամ, բայց գործերի վիճակը դրանից չի լավացել: Բացառությամբ ներքեւի թաղամասերի, խմելու ջուրը տրվում է ժամերով: Եվ գիտե՞ք ինչու: Ոռոգման համակարգը չի նորոգվում, որը կարելի էր անել մի քանի տոննա ցեմենտով: Ոռոգման ջուր չունեցողներն այդ նպատակով օգտագործում են խմելու ջուրը եւ, փաստորեն, ջրառատ Մեղրիում մարդիկ կանգնած են ե՛ւ խմելու, ե՛ւ ոռոգելի ջրի լրջագույն խնդրի առջեւ: Եվս մեկ օրինակ. 1995-ից մինչեւ օրս Մեղրիում չկա շուկա, մեղրեցին իր աճեցրած բերքը վաճառելու տեղ չունի: Դա, իմիջիայլոց, բավականին բարձրացնում է գները, ինչից օգուտ է քաղում ոչ թե արտադրողը, այլ՝ վերավաճառողը: Շուկան ժամանակին սեփականաշնորհել են, եւ տարիներ շարունակ չի գործում: Մի՞թե դժվար էր, որ քաղաքի մեկ այլ տարածքում շուկա կազմակերպվեր:

**– Մեղրին կանգնած է մի քանի մարտահրավերների առջեւ: Դրանցից երեքի վերաբերյալ կուզենայի Ձեր կարծիքն իմանալ: Առաջին. մեկ տարուց ավելի է՝ շրջանառվում է Մեղրագետին առնչվող խնդիրը, ինչին մեր թերթը քանիցս անդրադարձել է: Երկրորդ. հիվանդանոցի խնդիրը, հին շենքն ազատեցին, նոր շենքի տեղում մի տրակտոր մի քանի ժամով աշխատեցրին ու Մեղրի ժամանած նախագահին այդ ֆոնի վրա նկարեցին, ցուցադրեցին եւ վերջ: Երրորդ. Ձվարի տարածքը, որ Մեղրու ամբողջ շրջանին մատակարարվող խմելու ջրի ջրահավաք ավազանն է, տրվել է ինչ-որ մի անհայտ չինական-կանադական (իբր) կազմակերպության (հավանաբար՝ մեր ծպտված հայրենակիցների փայաբաժնով): Եվ հիմա այնտեղ որոնողական-հետախուզական աշխատանքներ են կատարվում: Ի՞նչ եք մտածում այդ հիմնախնդիրների վերաբերյալ: Մեղրու քաղաքապետի պաշտոնին հավակնող ցանկացած մարդ, կարծում ենք, պետք է դրանց վերաբերյալ հստակ պատասխան ունենա:**

– Բոլոր այդ հարցերն ունեն մեկ ընդհանուր պատասխան. Մեղրու քաղաքապետը պետք է ընտրված լինի մեղրեցիների կողմից՝ առանց դրսի միջամտության, եւ հաշվետու լինի միայն համայնքին: Իսկ եթե քաղաքապետը դրսից, կողքից, վերեւից պարտադրված եղավ, ապա նա չի կարող մեղրեցու շահի պաշտպանել, նա հազիվ կամակատար է լինելու իրեն հովանավորողների կասկածելի ձեռքում: Ե՛վ գետի, ե՛ւ Ձվարի պարագայում անհրաժեշտ են, նախեւառաջ, անկախ փորձագիտական եզրակացություններ, որից հետո հարցերը պետք է լուծեն մեղրեցիները՝ միգուցեեւ տեղական հանրաքվեի միջոցով: Դուք տեղյա՞կ եք, որ Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի շահագործման ժամանակ Մեղրի գետում վերացել էր ձուկը, իսկ հիմա, երբ հանքավայրը ժամանակավորապես չի շահագործվում, ձուկը կրկին վերադարձել է այնտեղ: Հիվանդանոցի մասին. մինչեւ հիմա մեղրեցիներին չեն համոզել, թե ինչու վերցրին հիվանդանոցի շատ լավ ու հարմար շենքը: Տարեց մեղրեցիները պատմում են, որ այդ հիվանդանոցի տեղն էլ հատուկ էր ընտրված, որ, իբր, գլխացավ ունեցող մարդն այնտեղ մի երկու ժամ նստելուց հետո ազատվում էր ցավից: Հիմա այդ շենքի ճակատագիրն անհայտ է, նորի մասին էլ միայն խոսում են: Նախ, եթե կարելի է, պետք է նախկին հիվանդանոցը վերականգնել. դա բոլոր մեղրեցիների ցանկությունն է, իսկ եթե հնարավոր չէ, ապա պետք է հին հիվանդանոցի շենքը տալ համայնքին՝ երիտասարդ ընտանիքների համար բնակարան դարձնելու նպատակով: Մեղրու քաղաքային իշխանությունն անցած երկու տարում արդեն իսկ պիտի լուծած լիներ այդ խնդիրը…

**– Կա մի հարց, որ տալիս ենք Մեղրու քաղաքապետի բոլոր թեկնածուներին: 1970-ականներից Հայաստանում հատուկ (տարբերակված) մոտեցում էր ցուցաբերվում Մեղրու հանդեպ (Կարեն Դեմիրճյանի շնորհիվ): Վազգեն Սարգսյանն էլ այդպիսի ծրագրեր ուներ: Ռոբերտ Քոչարյանի եւ Անդրանիկ Մարգարյանի ժամանակվանից սկսած Մեղրում այլեւս տարբերակված մոտեցում չի ցուցաբերվում: Չե՞ք կարծում, որ նախկին մոտեցումը պետք է վերականգնել:**

– Այո՛, Հայաստանի կառավարությունն ի սկզբանե պետք է հատուկ մոտեցում ունենար Մեղրու տարածաշրջանի հանդեպ, ինչը չենք տեսնում: Բայց դա պետք է հասունացներ Մեղրու քաղաքապետը, նա պետք է բարձրաձայներ եւ համոզեր իշխանությանը, որ դրա կարիքը կա: Դա չէ միայն, նաեւ անհեթեթ որոշումներ են ընդունվում Մեղրու հետ կապված: Վանք եւ Կալեր գյուղերի վարչական տարածքները միավորել են Վարդանիձորին, որի համար ոչ մի հիմք չեմ տեսնում: Կարող էր չէ՞ Մեղրու քաղաքապետը հակադրվել այդ որոշմանը, ինչի համար բազմաթիվ փաստարկներ կան: Կամ՝ խոսում են համայնքների խոշորացման մասին: Ինչպե՞ս կարելի է դա կիրառել Մեղրու շրջանում: Իսկ Մեղրու քաղաքապետը ձայն չի հանում:

**– Շրջափակման մեջ գտնվող Հայաստանն աշխարհի հետ կապող երկու դարպասից մեկը Մեղրին է: Բայց՝ հայ-իրանական՝ օրավուր զարգացող հարաբերությունների ֆոնի վրա Մեղրին, կարծեք, որեւէ ձեւով չի ինտեգրվում դրանց մեջ: Ինչո՞ւ:**

– Ես էլ Ձեզ պիտի հարցնեմ, իսկ ո՞վ է դա կարեւորում, ո՞վ է դրանով զբաղվում: Հասարակ մի հարց. մաքսատանը կից ի սկզբանե շուկա պիտի գործեր՝ մեղրեցիներին շատ թե քիչ արտոնություններ տվող: Տարիներ շարունակ հազարումի պատճառ բերեցին, որ այդ շուկան չգործի եւ չի գործում: Եվ նման շատ հարցեր, որ կարելի էր գլուխ բերել սրտացավ լինելու, մեղրեցիների մասին մտածելու դեպքում: Իսկ հիմա Մեղրին, լինելով սահմանադուռ, ոչինչ չի շահում դրանից, ինչն անբնական երեւույթ է, որքան էլ փորձենք մեղմացուցիչ հանգամանքներով պատճառաբանել այդ երեւույթը: Ինչպե՞ս հասկանալ:

**– Քիչ առաջ նշեցիք Ագարակի կոմբինատ-Մեղրի՝ գոյություն չունեցող առնչությունների մասին: Բայց դա, կարծում ենք, ավելի լուրջ քննարկման հարց է: Մեղրին, փաստորեն, ազդակիր համայնք է հայտարարված հանքարդյունաբերության ոլորտում, բայց կոմբինատը տարեկան գոնե մեկ փոքրիկ ծրագիր Մեղրիում չի իրականացնում:**

– Իսկ ի՞նչ է արել քաղաքապետարանն այդ խնդիրը լուծելու ուղղությամբ եւ ո՞ր օղակում է խոչընդոտի հանդիպել: Ես մի բան գիտեմ՝ կոմբինատը պետք է հատուցի (թեկուզեւ մեր համայնքի օդային ավազանին հասցվող վնասի համար, որը շատ թանկ է նստում մեղրեցու առողջության վրա) Մեղրի քաղաքին: Դա աշխարհում ընդունված կարգ է: «Սիփան 1-ը» , եթե հիշում եք, ինչ որ ձեւով ժամանակին հատուցում էր այդ վնասը՝ դպրոցին, մանկապարտեզին օգնություն ցույց տալով:

**– Ձեր պատասխանի մի հատված՝ մարդկանց առողջությանը վերաբերող, ավելի լուրջ խորքեր ունի: Մի քանի հիվանդություններ Մեղրիում արագորեն աճում են, բնակչության ծերացածության ցուցանիշն է աճում, իսկ մենք՝ բոլորս, կողքից հայեցողի դերում ենք:**

– Ավելի տխուր բան պիտի ասեմ՝ 50-ն անց մեղրեցի տղամարդուն տարեք Երեւան եւ համեմատեք այնտեղ բնակվող նույն տարիքի տղամարդու հետ: Թեկուզեւ արտաքին տեսքից Դուք ահռելի տարբերություն կտեսնեք՝ ի վնաս մեղրեցի տղամարդու: Այսինքն՝ Մեղրիում մարդկանց կյանքի եւ առողջության հետ ինչ-որ բան է կատարվում, որի մասին, իսկապես, բոլորս լռում ենք: Դա էլ տեղական իշխանության գերխնդիրներից է, իշխանությունը մարդիկ նախեւառաջ նման հարցեր լուծել համար պետք է օգտագործեն: Այս դեպքում՝ նախ պետք է ուսումնասիրել այդ երեւույթը, վեր հանել պատճառները, որից հետո քննարկել անելիքները:

**– Ինչպիսի՞ն պետք է լինի Մեղրու քաղաքապետը (անկախ Ձեր ընտրվել-չընտրվելուց):**

– Մեղրու քաղաքապետը նախեւառաջ լավ թիմ պետք է ունենա: Ասենք՝ շատ ամոթ է, որ մեր օրերում Մեղրու քաղաքապետարանի իրավաբանը զանգահարի Կոզմանովին եւ ինչ-որ բան հարցնի նրանից, դա արդեն վերջն է: Ուրեմն՝ Մեղրու քաղաքապետը պետք է այնքան ուժեղ լինի, որ կադրերն ընտրելիս առաջնորդվի ոչ թե բարեկամության, անձնական նվիրվածության սկզբունքով, այլ՝ պրոֆեսիոնալիզմի սկզբունքով: Երիտասարդը բուհն ավարտելուց հետո գալիս է ու տարիներով անգործ մնում, իսկ հետո մոռանում իր մասնագիտությունը կամ հեռանում Մեղրուց: Իսկ հին կադրերն իրենց տեղը չեն զիջում ջահելներին: Քաղաքապետը պետք է լինի բոլորինը, պետք է լինի վերկուսակցական: Ուղիղ իմաստով կուսակցականը չի կարող լինել բոլորի քաղաքապետը: Քաղաքապետը պետք է տիրություն անի համայնքային կյանքի բոլոր ոլորտներին: Մեղրին կարող էր եւ անվանի սպորտսմեններ տալ հայ ժողովրդին, այդ ներուժը ես տեսնում եմ երիտասարդության մեջ, բայց ո՞վ է նրանց տերը: Լավ, եթե մարդը սպորտով չի զբաղվում, մշակութային կյանքին չի մասնակցում (ինչը Մեղրիում լիովին բացակայում է), աշխատանք չունի, ապա ինչո՞վ պիտի զբաղվի: Մի՞թե նման մարդուն հանցագործ դառնալու ճանապարհի վրա չենք դնում:

**– Չե՞ք կարծում, որ քաղաքապետ ընտրվելու դեպքում վերադաս իշխանությունների հետ շփումների խնդիր կունենաք, քանի որ իրենց թեկնածուն չեք եղել, քանի որ պարտության եք մատնել իրենց թեկնածուին:**

– Եթե սահմանադրորեն ձեւավորված իշխանություն է, եթե ժողովրդի վստահության քվեն ունեցող իշխանություն է, ապա առաջինն ինքը պետք է շնորհավորի ինձ՝ ընտրվելու դեպքում: Ուրիշ բան չեմ պատկերացնում: Ինչպե՞ս կարելի է ժողովրդի կողմից ընտրված քաղաքապետին (եթե անգամ իշխանական կլանից չէ) այլ աչքով նայել:

**– Քաջարանի կոմբինատն է, կարծեք, ակտիվություն ցուցաբերում Մեղրիում, ինչո՞վ է դա պայմանավորված:**

– Թե ինչով է պայմանավորված Քաջարանի կոմբինատի ակտիվությունը, դա քննարկման այլ նյութ է: Բայց, ըստ հավաստի աղբյուրների, Քաջարանի կոմբինատը վերջին տարիներին (Սերգեյ Հայրապետյանի քաղաքապետ լինելու ընթացքում) Մեղրի համայնքին տրամադրել է 96 մլն դրամ, որից հետո՝ եւս 28 մլն դրամ: Գործող քաղաքապետը ճիշտ կաներ, որ հանգամանալից հաշվետվություն տար բնակչությանը եւ ասեր, թե ինչ նպատակով է ծախսել այդ գումարը: Առհասարակ կողմնակից եմ թափանցիկ աշխատանքին: Գործող քաղաքապետը մինչեւ սեպտեմբերի 9-ը նաեւ հաշվետվություն պետք է տա բյուջեի ծախսային մասի վերաբերյալ (ըստ տարիների): Իսկ եթե այդ տեղեկատվությունը լիներ քաղաքապետարանի կայքում՝ այսօր նման հարց չէր բարձրացնի:

**– Անկախության շրջանի սկզբում Մեղրին, կարծեք, անառիկ ամրոց էր ընտրությունների ժամանակ: Իշխող քաղաքական ուժն այդտեղ անընդմեջ պարտություններ էր կրում: Հիմա, ըստ էության, նախկին Մեղրին չկա այլեւս…**

– Մեղրին միասնական, համախմբված լինելու կարիք ունի: Հատկապես համայնքային խնդիրներում մենք պետք է բռունցք լինենք, ինչը որոշ ուժերի ջանքով այլեւս չկա: Ճիշտ չեմ համարում նաեւ մարդկանց պահվածքը, ովքեր ընտրությունից ընտրություն ճամբար են փոխում՝ ելնելով ոչ թե գաղափարական, այլ անձնական շահերից: Միասնական լինելու դեպքում Մեղրու հետ այսպես չէին վերաբերվի:

**– Ձեր խոսքը՝ քվեարկության գնացող մեղրեցի ընտրողին:**

Թող յուրաքանչյուրը ճիշտ ընտրություն կատարի: Թող բոլորը մասնակցեն ընտրություններին եւ թող բոլորիս ջանքով արդար ընտրություն ապահովվի: Իմ համակիրներին հավաստացնում եմ՝ ձայների կեղծում թույլ չեմ տալու եւ տեր եմ կանգնելու ամեն մի քվեի: Մեղրեցիներին կոչ եմ անում նաեւ չենթարկվել որեւէ շանտաժի, որեւէ ահաբեկման, քվեարկեք այնպես, ինչպես ձեր խիղճն է թելադրում: Նաեւ խնդրում եմ՝ տեղյակ պահեք մեր նախընտրական շտաբին, եթե որեւէ մեկը կհամարձակվի ոտնահարել ձեր ընտրական իրավունքը:

**Հարցազրույցը՝ ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ**



## Հեռացավ՝ մինչեւ վերջ մնալով օտար ու Սյունիքի մարզին անհաղորդ

ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի գլխավոր դատախազի օգոստոսի 28-ի հրամանով աշխատանքից ազատվել է Սյունիքի մարզի դատախազ Արայիկ Թարվերդյանը:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ մարզի դատախազի պաշտոնում նշանակում կատարում է գլխավոր դատախազը դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց թվից, եթե որակավորման հանձնաժողովը դրական եզրակացություն է տալիս այդ անձին համապատասխան պաշտոնում նշանակելու համար: Պաշտոնի նշանակվելու դեպքում անձը գլխավոր դատախազի կողմից հանվում է դատախազների առաջխաղացման ցուցակից:

Գլխավոր դատախազության մամուլի ծառայությունից հայտնում են, որ մարզի դատախազի նշանակման վերաբերյալ կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

**www.news.am**

## «Սյունյաց երկիր» թերթի հայտարարությունը

«Սյունյաց երկիր» թերթի N21-ը, առ 28 օգոստոսի 2012թ., բաղկացած 20 էջից (A3 չափսի), ամբողջովին նվիրված է Կապանի քաղաքապետի թեկնածու Արտուր Աթայանին: Համարում ներկայացված են Կապանի գործող քաղաքապետի հաշվետվությունը՝ չորսամյա գործունեության մասին, նախընտրական ծրագիրը: Զետեղված են նաեւ քաղաքապետի հարցազրույցն ու ընտրողներին հղած խոսքը, կարծիքներ Արտուր Աթայանի մասին: Օգոստոսի 27-ին, ժամը 18-ին պատրաստ էր նաեւ թերթի համացանցային տարբերակը http://www.syuniacyerkir.am/ : Երկու-երեք ժամ անց արդեն թերթը մեծ արձագանք է գտել Կապանում: Գիշերը, սակայն, թերթի կայքը ենթարկվել է հակերային հարձակման եւ ջարդվել: Խմբագրության եւ ինտերնետ մատակարարի համատեղ ջանքերով թերթի էլեկտրոնային կայքն օգոստոսի 28-ին ժամը 11.00-ին վերականգնվել է: Երեկ խմբագրությունը ստացել է նաեւ սպառնալից հեռախոսազանգեր:

Խմբագրությունը կոչ է անում Կապանի քաղաքապետի թեկնածուների նախընտրական շտաբներին ու նրանց սպասավորներին՝ զերծ մնալ նման անբարո արարքներից եւ ընտրապայքարը շարունակել քաղաքակիրթ ձեւով:

«Սյունյաց երկիրը» եղել եւ մնում է բոլոր սյունեցիների թերթը եւ ներկա ընտրապայքարում ընդունել (ու շարունակում է ընդունել) քաղաքական գովազդի պատվերներ Կապանի, Սիսիանի, Մեղրու քաղաքապետերի (Գորիս, Քաջարան եւ Ագարակ քաղաքներում համայնքի ղեկավարի ընտրություն չի լինի) բոլոր թեկնածուներից (անկախ կուսակցական եւ կլանային պատկանելությունից):

**«Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն
28 օգոստոսի 2012թ.**

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՈՒՐԲԱԹ ● 31 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Թ ● № 22 (263)

ԿԱՐԾԻՔՆԵՐ

# ԻՆՉՈ՞Ւ

## Սերգեյ Հայրապետյանն է Մեղրու քաղաքապետի մեր թեկնածուն.

### ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

**Երեւանի պետական մանկավարժական համալսարանի ուսանողուհի**



Դեռեւս հին ժամանակներից կա կարծիք, որ առաջնորդն օժտված պետք է լինի որոշակի դրական հատկանիշներով: Մեր ժամանակներում այս նախադրյալը եւս արդիական է: Նա ունի բոլոր հատկանիշները, որոնք անհրաժեշտ են քաղաքը ղեկավարելու համար: Սերգեյ Հայրապետյանի հետ առնչվել եմ որպես ՀԿ-ի անդամ, ինչպես նաեւ որպես «Երիտասարդական ձայն» ակտիվ խմբի ներկայացուցիչ: Ընթացքում քաղաքապետարանի հետ մի քանի ծրագրեր ենք իրականացրել: Ս.Հայրապետյանը յուրաքանչյուր հարցում ցույց է տալիս անհատական մոտեցում, օգնում է եւ խորհուրդներ տալիս: Ի դեմս Սերգեյ Հայրապետյանի՝ տեսել եմ խելացի, բարի, սրտացավ եւ բանիմաց քաղաքապետի, ով քաղաքի փոքրիկ բյուջեի, միջազգային ամենատարբեր դոնոր կազմակերպությունների միջոցներով փորձում է լուծել համայնքի խնդիրները: Մեղրեցին պետք է քաղաքապետ ընտրի՝ առաջնորդվելով, նախեւառաջ, թեկնածուի գիտելիքներով, ինտելեկտով, ունակություններով: Կարող եմ ասել, որ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքում շատ բան է դրականորեն փոխվել, օրինակ՝ Մեղրու մշակույթի պալատի տանիքի եւ գրադարանի հարկաբաժնի հիմնանորոգումը, մինչ այդ գրքերը շատ վատ պայմաններում էին գտնվում: Ես իմ քվեն տալու եմ Սերգեյ Հայրապետյանին, ում մաղթում եմ միմիայն հաղթանակ:

### ՍԻՄՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**Մեղրու N1 դպրոցի տնօրեն**



Պաշտոնավարման առաջին իսկ օրվանից նրա եւ դպրոցի միջեւ ստեղծվել են սերտ աշխատանքային հարաբերություններ: Նրա շնորհիվ վերանորոգվեցին դպրոցի տանիքը, դահլիճը, իսկ այժմ փորձում է միջնորդել, որ դպրոցի ամբողջ շենքը վերանորոգվի: Մանկավարժական կոլեկտիվը հարգում եւ սիրում է նրան: Եվ մեզ համար նախեւառաջ մեծ նշանակություն ունի ներկայիս քաղաքապետի գրագետ եւ բանիմաց լինելը: Քաղաքապետը նույնպես փոխադարձ հարգանք ու պատկառանք է տածում մանկավարժական կոլեկտիվի նկատմամբ: Տոնական օրերին այցելում է դպրոց, շնորհավորում մարդկանց: Դպրոցի շրջանավարտների համար շատ հետաքրքիր մի ավանդույթ է սկիզբ դրել: Ամեն տարի հանդիպում է կազմակերպում շրջանավարտների հետ, խոսում նրանց հուզող խնդիրներից, ներկայացնում Մեղրիում կատարված աշխատանքները, պատասխանում ներկաների հարցերին: Տեղի են ունենում ակտիվ քննարկումներ Մեղրու հիմնախնդիրների շուրջ: Հանդիպումներն անցնում են ազատ եւ անկաշկանդ մթնոլորտում, ինչը քաղաքապետի մարդամոտ եւ անմիջական խառնվածքի արդյունք է: Չորս տարում Սերգեյ Հայրապետյանը շատ հիմքեր է գցել, շատ ձեռնարկներ է սկսել, որոնք պետք է ավարտին հասցնել: Եվ, կարծում եմ, նաեւ այդ պատճառով պետք է մեղրեցին այս անգամ էլ իր քվեն տա Սերգեյ Հայրապետյանին:

### ՍԱՄՎԵԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**Արցախյան պատերազմի վետերան, փոխգնդապետ**



Սերգեյ Հայրապետյանն իր մարդկային, բարոյական հատկանիշներով հանդերձ առաջին հերթին հայրենասեր մարդ է եւ հայրենասեր մեղրեցի: Բազմաթիվ ծրագրեր ունի, որոնք քիչ-քիչ փորձում է անել: Պետք չէ մոռանալ, որ շատ բան նա չի կարող իրագործել, քանի որ համայնքի բյուջեն փոքր է: Որպես «Ազատամարտի վետերանների միության» Մեղրու տարածաշրջանի կազմակերպության նախագահ՝ համագործակցում եմ Մեղրու քաղաքապետի հետ, եւ նա շատ հարցերում աջակցում է մեզ, մանավանդ մեր զոհված մարտական ընկերների ընտանիքներին օգնություն ցուցաբերելու հարցում: Պետք է Սերգեյ Հայրապետյանին մի հնարավորություն եւս տալ, որ քաղաքում այլ գործեր էլ կարողանա կատարել: Ըստ էության Սերգեյ Հայրապետյանը շատ համբերատար է եւ հանդուրժող, որը ոմանք երբեմն փորձում են չարաշահել: Առաջիկա ընտրություններում նրան մաղթում եմ հաղթանակ:

### ՇՈՒՇԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**Մեղրու N2 դպրոցի պատմության ուսուցչուհի**



Ավարտվող ընտրաշրջանում ես աջակցել եմ Սերգեյ Հայրապետյանին մի պարզ պատճառով՝ որ մեզ՝ ուսուցիչներիս համար առաջնահերթ է քաղաքապետի կրթված, գրագետ լինելը եւ հարգանքը կրթության ոլորտի աշխատակիցների հանդեպ: Եվ սրանք միայն խոսքեր չեն, այլ իրողություն, ինչն այս չորս տարվա ընթացքում որդեգրած գործելաոճով ապացուցել է: Դպրոցական բոլոր միջոցառումներին Սերգեյ Հայրապետյանը մասնակցում է, տոնական օրերին այցելում է դպրոց: Ընտրողն իր քվեն պետք է տա նրան, քանի որ համայնքի հոգսերի նկատմամբ շատ սրտացավ է եւ անում է հնարավոր ամեն բան դրանց լուծման համար: Բնակչության հետ շփումների ժամանակ շատ մարդամոտ է եւ անկաշկանդ: Բավականին մեծ ավանդ է ներդրել մեր դպրոցի վերանորոգման գործում՝ սկսած դպրոցի տանիքի վերանորոգման գործից, անմասն չի մնում նաեւ կրթական գործընթացի կազմակերպումից: Հիշում եմ՝ մի անգամ Ազգային ժողովի «բաց դռների օր» միջոցառման շրջանակներում դպրոցի աշակերտներին ֆինանսապես աջակցեց, մի ամբողջ դասարան եղավ Երեւանում, ծանոթացավ մայրաքաղաքի տեսարժան վայրերին: Մեղրեցիներին կոչ եմ անում, որ իրենց ընտրությունը կատարեն առանց հաշվենկատության, սրտի մտոք եւ չենթարկվեն որեւէ ազդեցության:

### ՎՈԼՈԴՅԱ ԱԴԱՄՅԱՆ

**Հայրենական մեծ պատերազմի վետերան**



Սերգեյ Հայրապետյանը կարողացել է իրեն լավագույնս դրսեւորել: Օրինակ՝ Մեղրու կամրջի ընդլայնումը շատ գովելի եւ օգտակար գործ էր: Գործարանային փողոցն ասֆալտապատել է, բարելավել է քաղաքի աղբահանությունը, նախկինի համեմատ՝ այժմ Մեղրու փողոցներն ավելի մաքուր են: Հիմա էլ կենտրոնական հրապարակն է վերանորոգում, շատ լավ նախաձեռնություն է. այն խորհրդային տարիներից հետո չէր վերանորոգվել: Վետերանների հանդեպ նույնպես շատ ուշադիր է, տոնական օրերին հանդիպում է եւ մեր հոգսերով հետաքրքրվում: Սեպտեմբերի 9-ին քվեարկելու եմ Սերգեյ Հայրապետյանի օգտին:

### ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**Մեղրու առաջին քաղաքապետ**



Սեպտեմբերի 9-ին քվեարկելու եմ՝ հիմք ընդունելով թեկնածուի ինտելեկտը եւ գիտելիքները, որոնք ինձ համար առաջնահերթ պայման են: Իմ կարծիքով՝ մեղրեցին, հասկանալով եւ գիտակցելով քաղաքում ստեղծված իրավիճակը, պետք է նախապատվությունը տա Սերգեյ Հայրապետյանի թեկնածությանը: Վերջին հաշվով կան աշխատանքներ, որոնք ներկայիս քաղաքապետը չի հասցրել ավարտին հասցնել, կարծում եմ, չորս տարին բավարար չէ համայնքապետի համար, որ կարողանա ծրագրված ու ձեռնարկված աշխատանքները, փոփոխություններն ամբողջապես կատարի: Սերգեյ Հայրապետյանին դեռեւս դպրոցական տարիներից ճանաչում եմ որպես օրինապահ, կրթված եւ անմիջական մարդ: Ես, որպես Մեղրու առաջին քաղաքապետ, բարձր եմ գնահատում չորս տարում նրա կատարած աշխատանքը: Չեմ կարծում, որ կա այնպիսի մի գործ, որը նա կարող էր անել, բայց չի արել մեր քաղաքի համար, իսկ շատեւշատ գործեր կատարել է՝ բավականին լուրջ դժվարություններ հաղթահարելով: Ոչ մի հարցում նա ուժ չի կիրառել, պաշտոնական իր դիրքը չի չարաշահել, այլ ընտրել է փոխզիջումների ճանապարհը: Տեսնելով երկրում տիրող ֆինանսատնտեսական իրավիճակը՝ միանշանակ կարող եմ ասել՝ նա իր աշխատանքը կատարել է բարձր մակարդակով եւ առանց լուրջ բացթողումների: Նրան այդ աշխատանքները շարունակելու նոր հնարավորություն պետք է տալ:

### ՀԵՆՐԻԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

**Տաշտունի գյուղապետ**



2008-ին ընտրվել եմ համայնքի ղեկավար, ինչպես եւ Սերգեյ Հայրապետյանը, պաշտոնավարման առաջին իսկ օրերից համագործակցել ենք: Տաշտունում շատ խնդիրներ կային, եւ դրանց լուծմանը Մեղրու քաղաքապետը նույնպես նպաստել է: Նա օգնեց լուծել գյուղի աղբահանության խնդիրը: Արդեն երրորդ տարին է՝ համատեղ ճամբար ենք կազմակերպում: Վերջերս Մեղրու քաղաքապետի հովանավորությամբ Տաշտունում համերգ էր, գյուղացիները եւ ճամբարականները շատ գոհ էին, աշխույժ մթնոլորտ էր տիրում: Կարծում եմ՝ Մեղրու համայնքի ղեկավարը պետք է շրջանի գյուղերի ղեկավարների հետ բազմաթիվ հարցերում համատեղ գործի: Հենց այդպիսի գործելաոճ է որդեգրել Սերգեյ Հայրապետյանը, ով շատ սրտացավ է եւ պարտքի ու պատասխանատվության զգացումով է մոտենում նաեւ գյուղական համայնքների մտահոգություններին: Համայնքի ղեկավար աշխատելու համար դեռ չորս տարին բավական չէ, քանի որ տարիներ ի վեր կուտակված խնդիրները հնարավոր չէ այդքան կարճ ժամանակում լուծել: Մեղրու ընտրողները սխալված չեն լինի, եթե այս անգամ եւս իրենց ձայնը տան գործող քաղաքապետին:

### ԱԶԱՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

**«Մեղրու ՃՇՇՁ» ԲԲԸ տնօրեն, Մեղրու պատվավոր քաղաքացի**



Սերգեյ Հայրապետյանն այն սակավաթիվ մարդկանցից է, ովքեր չեն սիրում կատարած աշխատանքների մասին բարձրաձայնել, թեեւ ինքը շատ բան ունի ասելու կատարվածի մասին: Նա շատ բարի, հայրենասեր, խստապահանջ անձնավորություն է: Վերջին չորս տարվա ընթացքում միասին որոշակի գործեր ենք կատարել, դրանցից են Արաքսաշեն թաղամասի ջրագծի կառուցումը, որտեղ տարիներ ի վեր ջուր չի եղել, Մեղրու մշակույթի կենտրոնի տանիքի, գրադարանի վերանորոգումը, Գործարանային փողոցի կոյուղու, Փարամազի փողոցում խաղահրապարակի եւ ավտոկայանատեղի, Կառուցողների փողոցի խմելու ջրագծի կառուցման եւ ասֆալտապատման աշխատանքները, Մեղրու N1 դպրոցի մարզադահլիճի եւ տանիքի նորոգումը, Մեղրու կամրջի լայնացումը, Մեղրի գետի հունն ամրացնող պատնեշների կառուցումը եւ էլի շատ աշխատանքներ: Նա շատ նպատակասլաց մարդ է եւ դեռ շատ ծրագրեր ունի, որ ուզում է իրականացնել: Ես պաշտպանում եմ նրա թեկնածությունը եւ քվեարկելու եմ նրա օգտին:

**ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ՍՂԱԳՐԵՑ ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԸ**



ՏԵՍԱԿԵՏ

# Սերգեյ Հայրապետյանի թեկնածությունն այսօր այլընտրանք չունի

Մեղրի համայնքի ղեկավարի թեկնածու Սերգեյ Հայրապետյանի նախընտրական շտաբի կոչը



Սիրելի՛ մեղրեցիներ

Սեպտեմբերի 9-ին Մեղրին պետք է հերթական անգամ իր քաղաքապետն ընտրի: Քաղաքական այդ իրադարձությունն էլ պատճառ է դարձել, որ համայնքում ծավալվի թեժ ընտրապայքար, ինչին ականատես ենք այս օրերին:

Մեր թեկնածուն գործող քաղաքապետ Սերգեյ Հայրապետյանն է: Նա իր թեկնածությունն առաջադրել եւ ընտրապայքարի է ելել 2008թ. նախընտրական խոստումները, համայնքի քառամյա զարգացման ծրագրի (2008-12թթ.) հիմնադրույթները կատարած, ինչը նրան երիցս վստահելու հիմնավոր պատճառներից է: Հավասարակշռված, բարեկիրթ, ներկայանալի այս ղեկավարին հաջողվել է անցած չորս տարում ապահովել քաղաքապետարանի, ինչպես եւ ենթակա կազմակերպությունների բնականոն աշխատանքը, համայնքում հաստատել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ: Ճիշտ եւ արդյունավետ կառավարման արդյունքում քաղաքապետարանն ազատվեց ամիսներով մարդկանց աշխատավարձ չտալու տխուր ավանդույթից եւ մարեց նախկին քաղաքապետից ժառանգություն ստացած 31 մլն դրամի հասնող պարտքը: Ավելին՝ խելամիտ ֆինանսատնտեսական գործելակերպի արդյունքում համայնքը մարզում՝ բյուջեի եկամտային մասի եւ հատկապես սեփական եկամուտների կատարման ցուցանիշներով, դասվեց լավագույնների շարքը: Նրա ղեկավարման ընթացքում համայնքում լուծում ստացան մինչ այդ անլուծելի համարվող բազում խնդիրներ, իրականացվեցին սոցիալ-տնտեսական, կրթական ու մշակութային բավականին ծրագրեր, վերականգնվեցին մեղրեցիներին հարազատ ու սրտամոտ ավանդույթներ:

Խոհեմ ու շրջահայաց կառավարչի շնորհիվ, ինչպիսին Սերգեյ Հայրապետյանն է, Մեղրին ընդլայնեց համագործակցության շրջանակը Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների հետ, ինչի արդյունքում լուծվեցին քաղաքային մի քանի խնդիրներ:

Ուշագրավ է, որ Սերգեյ Հայրապետյանն ունի համայնքի՝ վաղվա օրվան առնչվող բազմաթիվ ու բազմաբնույթ ծրագրեր: Հետաքրքիր են հատկապես երիտասարդ եւ կարիքավոր ընտանիքների բնակարանային ապահովմանը, բնակարանաշինությանը, բազմաբնակարան շենքերի տանիքների, շքամուտքերի եւ բակերի հիմնանորոգմանը, համայնքի խմելու եւ ոռոգման ջրատար համակարգերի վերափոխմանը, ներհամայնքային փողոցների բարեկարգմանն ու ասֆալտապատմանը, մշակույթի կենտրոնի, N1 միջնակարգ դպրոցի, մանկապարտեզի վերանորոգմանը, բնակչության բժշկական եւ կոմունալ սպասարկմանը միտված ծրագրերը:

Ստեղծված իրավիճակում կարեւոր ենք համարում նշել, որ Սերգեյ Հայրապետյանն օժտված է կայուն եւ հարուստ գիտելիքներով, տիրապետում է կառավարման ժամանակակից տեխնոլոգիաներին, առաջադեմ աշխարհայեցողության կրող է: Նա մարդկանց հետ հաղորդակցվելու, համայնքի շահերը պաշտպանելու, քաղաքի հիմնախնդիրներն իշխանության վերին ատյաններ ներկայացնելու կարողություններ ունի:

Մենք ուղղակի պարտավոր ենք նրա հնարավորություններն օգտագործել ի շահ Մեղրու, մենք պարտավոր ենք նրան կանաչ ճանապարհ տալ՝ համայնքային ծրագրերն իրագործելու համար:

Սիրելի՛ մեղրեցիներ

Կոչ ենք անում ձեզ՝ սեպտեմբերի 9-ին քվեարկել Սերգեյ Հայրապետյանի օգտին: Մեղրիում ուրիշ արժանավորներ եւս կան, որ կարող էին առաջադրվել ու մրցակցել մեր թեկնածուի հետ, ինչը շատ տրամաբանական կլիներ: Բայց այդպես չեղավ: Եվ ստեղծված իրավիճակում Սերգեյ Հայրապետյանի թեկնածությունն այլընտրանք չունի: Նա է միակը՝ առաջադրված թեկնածուների մեջ, որ կարող է առաջիկա չորս տարում արժանապատվորեն առաջնորդել մեր քաղաքը:

Ուզում ենք հավատալ, որ համատեղ ուժերով, ձեզանից յուրաքանչյուրի ճիշտ եւ օբյեկտիվ կողմնորոշմամբ, ձեզանից յուրաքանչյուրի գիտակցված քվեով կօգնեք Սերգեյ Հայրապետյանին՝ իրականացնելու այն ծրագրերն ու նպատակները, որ դրել է իր առջեւ՝ հանուն Մեղրու վաղվա օրվա:

Վստահենք Սերգեյ Հայրապետյանին, ով առաջնորդվում է «Մեղրին մեր տունն է, եւ բոլորս ենք նրա տերը» կարգախոսով, ով ուզում է, որ այդ կարգախոսի կրողը լինի ամեն մի մեղրեցի:

**Մեղրու համայնքի ղեկավարի թեկնածու Սերգեյ Հայրապետյանի նախընտրական շտաբ**

Սյունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՈՒՐԲԱԹ ● 31 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Թ ● № 22 (263)

## ՄԵՂՐԻ



«Արեւիք-Մեղրի» երգի եւ բերքի փոնը 23 տարի ընդմիջումից հետո կազմակերպվեց 2010թ. հոկտեմբերին՝ հազարավոր մեղրեցիների եւ հյուրերի մասնակցությամբ:

# 2008-2012ԹԹ. ստեղծագործ աշխատանքի եւ առաջընթացի տարիներ



Մեծ եւ Փոքր թաղերն իրար միացնող կամուրջը, որ 2011-2012թթ. ընդլայնվել է 2.5 մետրով:



2011թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը Մեղրիում անցկացվեցին հայ-իրանական բարեկամության օրեր՝ նվիրված երկու հանրապետության միջեւ վերահաստատված բարեկամության 20-ամյակին: Մեղրի էր ժամանել Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի փոխնախարար Համիդ Շահաբադին:



Պահածոների՝ վերակառուցվող եւ արդիականացվող գործարանը:



2011թ. վերանորոգվեցին քաղաքի մշակույթի կենտրոնի փանիքը եւ կենտրոնական գրադարանի հարկաբաժինը:



Նորակառույց խաղահրապարակ՝ Զորավար Անդրանիկի թիվ 36 եւ 36ա շենքերի բակում:



Քաղաքի N1 հանրակրթական դպրոցի վերանորոգված մարզադահլիճը (2011թ.):